Հովհաննես Թումանյան

Կուրծքս երբեմն եռ է գալիս և հուզվում...

Կուրծքս երբեմն եռ է գալիս և հուզվում.
Ես մնում եմ անշարժ, ինչպես լուռ արձան,
Միտքս թռչում դեպի երկինք և սուզվում
Տիեզերքի խորության մեջ անսահման...

Ամփոփում է հանկարծ երկիր բովանդակ,
Սիրատարփիկ կուսի կուրծքին է փարում,
Խոնարհվելով իջնում մինչև ոտնատակ
Արհամարհված սրբությունը համբուրում...

Ետ է թռչում և մոլորված դեգերում

Քաղցրահուշիկ խոր անցյալի լուռ ծոցում,
Եվ թրթռում արդեն լռած երգերում,
Սառն ու տխուր շիրիմները շոշափում...

Հետաքրքիր ցանկությունով թևառած
Ապագայի մթության մեջ խարխափում,

Եվ մի սաստիկ տենչով լեցուն, սավառնած՝
Երջանկության սահմանները թևածում...

Թռչում է միտքս,
Կորչում է միտքս,
Եվ չեմ հասկանում,

Ինչ եմ ցանկանում:

1890